

АРОМЪ
СЕРЪ-АДУТОВЪ
1965

19650

ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ

ԱՅՆ Է

ՄԱՆԲ ՈՒՍՄՈՒՆԲ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

Ի ՊԷՏՍ

ՀԱՅԿԵՕՆԵԱՅ ՄԱՆԿԱՆՅ

Գ Ր Է - Լ

Ի ՄՍԵՐԱՅ ՄԱԳԻՍՏՐՈՍԷ

Կրթությանը վարժապետի Լաւարեան ճեմարանի
արհեստան լեզուայ:

ՉՈՐՐՈՐԿ ՏԻՊ

(Ըստ Երրորդ տպագրութեան անփոփոխ)

Ի ՄՈՍԿՈՒՆ

Въ Университетской типографіи (Катковъ и К°),
на Страстномъ бульварѣ.

1869



19650

»Ես լոյս յաշխարհ եկի. զի ամենայն ոք
հաւատայ յիս, ՚ի խաւարի մի մնացէ՛:»

Յովհ. ԺԲ. 46:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ

въ С.-Петербурѣ, 17 Октября 1868 года.



Մանունը ուսմանց որ աստըս գոնն
Միա դիր, մանուկ, լեր և ըզգօն.

Սերոյ ամմամբ և Հաւատոյ՝

Տեառն Աստուծոյ պաշտօն մատտ:

Երկեղած միտք ՚ի .քեզ թէ կայ,

Զոր ուսանիսդ՝ անդուլ խոկն:

Բարունապետն հանուրց Յիսուս

Զմանկախն օրհնեալ ըզդեռարոյս,

Այդպիսեանց է, ասէ, արժան

Յերկնից հանգչել ՚ի յօթեան:

Յուսափափազ փութան և դու

Կրցորդ նոցուն լինել պարու:

Ե՛ .քեզ արդ ժամ անմեղ աւուրբ

Հրեշտականալ ՚ի վարս ՚ի սուրբ:



ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ

ԱՅՆ Է

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

»Ի՛նչպիսիք են մեզ բանք, և դժուարապատում ՚ի մեկնեւ... Պիտոյ է ձեզ ուսանել թէ զի՛նչ են Նշանագիրք սկզբան (Մանր Ուսման) կամ Համարոց Գեղեցի) բանիցն Աստուծոյ. և եղերուք կարօտ կաթին, և ո՛չ հաստատուն կերակրոյ: Զի ամենայն որ կաթընկեր է, տգէտ է բանին արդարութեան. քանզի տղայ է: Այլ կատարելոցն է հաստատուն կերակուր որոց՝ վասն ՚ի չափսն հասանելոյ՝ ճաշակելէքն կիրթ են ընտրութեան բարւոյ և չարի»:

ԵՔԻ. Ե. 11 — 14:

- ◈ ՀԱՒԱՏՈՎ ի՛նչ ևս դու:
- Պ. Քրիստոնեայ:
- ◈ Օ, ի՛նչ ճշմանակէ Քրիստոնեայ բառը:
- Պ. Նշանակէ՝ Քրիստոսի հետեոյ կամ հասարակոյ:
- ◈ Ո՞րք նախ զրին զայդ անունը՝ Քրիստոսի հաւատացողաց:
- Պ. Առաքեալք զրին Ա՛նտիոք քաղաքումը՝ յետ Քրիստոսի համբարձման *:
- ◈ Օ, ի՛նչ ուսուցանէ Քրիստոնէական Այարդապետութիւնն:
- Պ. Ուսուցանէ պաշտել զԱստուած՝ ճշմարիտ Հաւատով, հաստատուն Յուսով, և անկեղծ Սիրով:

* Գործ. Ժն. 20:

ԳԼ Ե

ՀԱՒԵՏՎ

Հ. Քրիստոնէական հաւատալիքն որ գրուած
ծոյ մէջ պարունակեալ են համառօտիւ:

Պ. Հանդանակի մէջ, որ է հաւատամքն:

Հ. Եսն զհաւատամքը:

Պ. «Հաւատամք՝ ի մի Եստուած՝ հայր ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելիաց և աներևութից:

»Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Եստուծոյ, ծնեալն յԵստուծոյ հօրէ միածին, այսինքն յեղութենէ հօր. Եստուած յԵստուծոյ, լոյս ի լուսոյ, Եստուած ճշմարիտ՝ յԵստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթը:

»Որ յաղազս մեր մարդկան՝ և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելագոյն ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ հոգւովն սրբով: Որով

էառ մարմին, հոգի և միտք, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտագոյն՝ և ոչ կարծեօք:

»Չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝ յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ հօր:

»Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր, դատել զկենդանիս և զմեռելս: Որոյ թագաւորութեանն ոչ դոյ վախճան:

»Հաւատամք և ի սուրբ հոգին յանկողն և ի կատարեալն: Որ խօսեցաւ յօրէնս և ի մարդարէս և յաւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն. և բնակեցաւ ի սուրբսն:

»Հաւատամք և ի մի միայն՝ ընդհանրական և առաքելական եկեղեցի: Ի մի մկրտութիւն: Յապաշխարութիւն: Ի քառութիւն և ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանան յաւիտենից հոգւոց և մարմնոց. յաբքայութիւնն երկնից, և ի կեանն յաւիտենականս:»

»Իսկ որք ասենն, էր երբեմն՝ յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր

սուրբ շողին, կամ թէ յօչէից եղեն կամ
յայլմէ հուժնէ ասեն լինել զՈրդին Աստու-
ծոյ և կամ զսուրբ շողին, և թէ փոփոխելի
են կամ այլայլելի, զայնպիսինն նզովէ կա-
թուղիկէ և առաքելական եկեղեցի“:

„Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ
քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ
Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն
ձօր և Որդոյ և շողոյն սրբոյ. այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն“:

ձ. Այդ շանդանակդ յոր տեղ սահմանեցաւ.

Պ. Նիկիոյ ժողովոյն մէջ:

ձ. Ո՞ք ժողովեցան ՚ի Նիկիա:

Պ. Երեք հարիւր տասն և ութ շայրապետք:

ձ. Վասն էր ժողովեցան նոքա:

Պ. Վասն դատապարտելոյ զԱրիոս հերե-
տիկոսը:

ձ. Արիոսի հերետիկոսութիւնն ի՞նչ էր:

Պ. Նա ասէր, թէ „շայր Աստուած մեծ է
քան զՈրդի“, ևս թէ „Որդին արա-
րած է“:

ձ. Օ՞ր շանդանակը ո՞վ բերաւ ՚ի շայաս-
տան:

Պ. Արիստակէս շայրապետն, որ Պարիզորի
Լուսաւորչի կրտսեր (†††) որդին էր:

ձ. „Իսկ մեք փառաւորեսցուք“ ո՞վ ասաց:

Պ. Սուրբն Պարիզոր Լուսաւորիչ:

ձ. Քանի՞ զլուսաւոր շաւատալիք կան այդ
շանդանակի մէջ:

Պ. Ի՞նն՝

ա. Պոյութիւն և Միութիւն Աստուծոյ:

բ. Երրորդութիւն Աստուածային ան-
ձանց:

գ. Առարչագործութիւն Աստուծոյ և
Նախանձութիւն:

դ. Մարմնառութիւն Աստուածորդոյն:

ե. Միւսանդամ գալուստ նորա:

զ. Իջումն շողոյն Սրբոյ ՚ի Յորդանան:

է. Եկեղեցի Վարիստոսի, և Խորհուրդք
նորա:

ը. Յարութիւն մեռելոց:

թ. Վերջին դատաստան:

Ն. Պոյուժիւն և Սիուժիւն Մստուծոյ՝
ասելով՝ զի՛նչ իմանաս:

Պ. Իմանամ՝ թէ՛ Մստուած կայ և մի՛ է:

Ն. Մստուած ո՞վ է և ի՛նչ է:

Պ. Երկնի և երկրի ստեղծողն և կառավարողն է, բայց զնորա զինչուժիւնը ոչ մարդ կարող է իմանալ, և ոչ հրեշտակ:

Ն. Մստուած ո՞ւր է:

Պ. Օրուժեամբ յամենայն տեղիս է, բայց էութեամբ անպարագրելի է:

Ն. Ուստի՞ զիտես՝ թէ՛ Մստուած կայ:

Պ. Արարածոց վերայ նայելով, և զՄստուածաշունչ զիրքը կարգալով:

Ն. Օ՛րինչ նշանակէ Արարած բառը:

Պ. Մտեղծութիւն, այսինքն՝ յայլմէ (յո՛ւրեղէ) եղած՝:

Ն. Ո՞ր բանն ասի արարած:

Պ. Իաց յՄստուծոյ՝ ամենայն ինչ արարած է:

Ն. Ո՞րն է Մստուածաշունչ զիրքն:

Պ. Հին և նոր Ստակարանն է:

Ն. Ի՛նչ պատճառաւ կոչի Արարածաշունչ:

Պ. Այն պատճառաւ՝ որ Մստուծոյ շնչով (այսինքն՝ ազդեցութեամբ) գրուեցաւ և ոչ մարդկային ուսմամբ:

Ն. Ո՞րք զրեցին զՍտակարանքը:

Պ. Օհին Ստակարանը զրեցին Սարգարէք, և զնորը՝ Առաքեալք:

Ն. Մստուծոյ անունն ի՛նչ է:

Պ. Ո՞ր Ե՛ս, որ Եբրայեցոց լեզուաւ ասի Եօվայ կամ Եհովահ:

Ն. Ուստի՞ զիտես զայդ:

Պ. Մստուած ինքն յայտնեց Մովսէս մարգարէին՝ ասելով ՝ Ես եմ Մստուած Ո՞ր Ե՛ս * Ը:

Ն. Օ՛րինչ նշանակէ այդ անունը:

Պ. Նշանակէ. ՝ Ես եմ ինքնագոյ, անփոփոխ, անսկիզբն և անվախճան՝:

Ն. Կա՞ն և այլ անուանք Մստուծոյ:

Պ. Կան, որպիսի են՝ Տէր, Տէր Տերանց, Տէր Ամենակալ, Արարիչ, Ստեղծող, ևն:

* Եւ. Գ. 14:

Բ. ԵՐԲՐԴԻՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՆՉԱՆՑ

- ✠. Աստուածային անձինք քանի՞ են:
- Պ. Երկք:
- ✠. Ասած զնոցա անուանքը:
- Պ. Հայր. Որդի. Հոգի Սուրբ:
- ✠. Աստուածային անձինք զանազանի՞ն 'ի միմեանց:
- Պ. Այո, զանազանին անձնաւորութեամբ:
- ✠. Ի՞նչպէս:
- Պ. Այլ է հօր անձն, այլ է Որդւոյ անձն, և այլ է հոգւոյն Սրբոյ անձն:
- ✠. Ի՞նչութեամբ ևս զանազանի՞ն:
- Պ. Ո՛չ. զի են համաբուն, համազոյ, համակամ, համազօր, և համափառ:

Գ. ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

- ✠. „Արարչագործութիւն“ ասելով՝ զի՞նչ իմանաս:
- Պ. Իմանամ՝ թէ Աստուած յոչնչէ ստեղծեց զերկինքը և զերկիրը, և ինչ որ կայ նոցա մէջ:

- ✠. „Աստուածութիւն“ ասելով՝ զի՞նչ իմանաս:
- Պ. Իմանամ՝ թէ Աստուած զիւր ամենայն ստեղծուածքը իւր խնամովքն պահպանեալ է և պահպանէ:

Դ. ՄԱՐՄԵԱՌՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՈՐԴԻՈՅ

- ✠. Աստուածային անձանց որն մարմին առաւ և մարդացաւ:
- Պ. Երկրորդ անձն, այսինքն Որդին. ուստի է՛ «Ա ճմարտապէս» Աստուած կատարեալ, և մարդ կատարեալ:
- ✠. Յու՞մէ՞ առաւ Աս մարմին:
- Պ. Ի սուրբ Արևսէն Մարիամայ:
- ✠. Որդին Աստուծոյ յետ մարդանալոյն զի՞նչ կոչեցաւ:
- Պ. Արչեցաւ Յիսուս, Քրիստոս, Մեսիայ, Իմանուէլ:
- ✠. Յառաջ քան զմարդանալն զի՞նչ կոչէր:
- Պ. Արչէր Բան, Միածին, Որդի:
- ✠. Օ՞րի՞նչ նշանակէ Յիսուս, և որ լեզուի բառ է:

- Պ. Նշանակէ Փրինչ, և Եբրայեցւոց լեզուի բառ է:
- Հ. Ի՞նչ պատճառաւ այդպէս կոչի:
- Պ. Եւն պատճառաւ՝ որ Նա զմարդկային ազգը փրկեց ՚ի դժոխոց և ՚ի ձեռաց սատանայի:
- Հ. Ինչով փրկեց:
- Պ. Իւր չարչարանօք և մահուամբ:
- Հ. Քրիստոս և Մեռիայ՝ որ լեզուաց բառք են, և զի՞նչ նշանակեն:
- Պ. Քրիստոս՝ Յունարէն է, և Մեռիայ՝ Եբրայեցերէն. երկուքն ևս նշանակեն Օթեալ:
- Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Օթեալ:
- Պ. Եւն պատճառաւ՝ որ Նա օծեալ էր ՚ի Հոգւոյն Սրբոյ, որպէս ինքն ասաց. »Հոգի Տեառն ՚ի վերայ իմ՝ վասն որոյ և օծ իսկ զիս *«:
- Հ. Ուրեմն ի՞նչ եղև Նա այնու օծմամբ:
- Պ. Եղև Քահանայապետ, Թագաւոր յաւիտենական, և Մարգարէ ՚ի վեր քան զամենայն մարգարէս:

* Ղուկ. 7. 18:

19650

- Հ. Ո՞ր լեզուի բառ է Լաճմանուէլ, և զի՞նչ թարգմանի:
- Պ. Եբրայեցւոց լեզուի բառ է, և թարգմանի՝ Լուս Բեզ Եստրաշ:
- Հ. Ի՞նչ ինչ արար Որդին Եստուծոյ յեա ծնանելոյն մարմնով ՚ի Առուէն:
- Պ. Ատարեց զայն ամենայն խորհուրդքը կամ գործքերը մարդեղութեան, որք գուշակուած էին ՚ի մարգարէից:
- Հ. Ո՞ք են զլեաւորքն այն խորհրդոց կամ գործոց:
- Պ. Են՝ Մկրտութիւնն, Քարոզութիւնքն, Հրաշագործութիւնքն, Չարչարանքն, Մահն, Թաղումն, Յարութիւնն, Համբարձումն և նստելն ընդ աջմէ Հօր:
- Հ. Չի՞նչ կոչին այդքիկ յատկապէս:
- Պ. Կոչին Տնօրէնութիւնք կամ Տնօրինականք Քրիստոսի:

- Ե. ՄԻԻՍԱՆԿԱՄ ԳԱԼՈՒՍ ԲԲՍՍՈՒ
- Հ. Կրկին անգամ գալոց է Քս յաշխարհ:
 - Պ. Եւն, գալոց է իւր Եստուածային զօրութեամբ և փառօք:

ՊԵՏԼԿԱՆ
ՄԱՏԵՆԱԿԱՆ
2

- ✠. Սան էր գալոց է:
- Պ. Սան դատելոյ թէ գիկնդանի մարդիկը
և թէ գմեռեալքը:
- ✠. Երբ պիտի լինի այդ:
- Պ. Մեզ անգիտելի է. վասն զի Քրիստոս
չկամեցաւ յայտնել:

Զ. ԻՋՈՒՄՆ ՀՈԳԻՈՅՑ ՍՐԲՈՑ Ի ՅՈՐԴԱՆԱՆ

- ✠. Հոգին Սուրբ էրբ իջաւ 'ի Յորդանան:
- Պ. Երբ որ Քրիստոս մկրտուեցաւ անդ 'ի
Յովհաննէս Սկրաչէն:
- ✠. Ի՞նչպէս իջաւ:
- Պ. Եղանակերպ երևամբ:
- ✠. Ինչո՞ւ համար:
- Պ. Քրիստոսի Աստուածութիւնը յայտ-
նելոյ համար, և վկայելոյ՝ թէ Նա է
ձշմարիտ Որդի Աստուծոյ:

Է. ԵՍԵՂԵՑԻ ԲԲԻՍՏՈՍԻ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԳ ԿՈՐԱ

- ✠. Եկեղեցի որ լեղուի բառ է, և զե՞նչ նշա-
նակէ:
- Պ. Յունական բառ է, և նշանակէ Ժողով
կամ Ժողովուրդ:

- ✠. Քրիստոսի ժողովուրդն որն է:
- Պ. Ամենայն ձշմարիտ քրիստոնեայք:
- ✠. Եկեղեցին Քրիստոսի քանի՞նչան կամ
յատկութիւն ունի:
- Պ. Չորս, այսինքն՝ Միութիւն, Սրբու-
թիւն, Բնդհանրականութիւն, և Առա-
քելականութիւն:
- ✠. Եկեղեցին ի՞նչ պատճառաւ կոչի Մի:
- Պ. Այն պատճառաւ՝ որ ամենայն քրիս-
տոնեայք միով հաւատով զմի Քրիս-
տոս՝ զմի Աստուած պաշտեն:
- ✠. Ի՞նչ պատճառաւ կոչի Մարք:
- Պ. Այն պատճառաւ՝ որ ամենայն քրիս-
տոնեայք մկրտութեամբ սրբեալ են 'ի մե-
ղաց, և Քրիստոնէական հաւատքն
սրբութիւն քարոզէ:
- ✠. Եկեղեցոյն Քրիստոսի Բնդհանրական
կոչուելոյ պատճառն ի՞նչ է:
- Պ. Այն է՝ որ Քրիստոնէութիւնն շա-
տազաց մէջ տարածեալ է, և մինչև 'ի
կատարած աշխարհի մնալոց է:
- ✠. Առաքելական կոչուելոյ պատճառն ի՞նչ է:
- Պ. Այն է՝ որ Քրիստոնէական հաւատքն

ի ձեռն Մաքելոյ քարոզեցաւ, և Մաւ
քելական բանից վերայ հաստատեալ է:

Ն. Եկեղեցին քանի՞ խորհուրդ ունի:
Պ. Եօթն՝

ա. Սկրտութիւն:

բ. Դրոշմ:

գ. Եպաշխարութիւն:

դ. Հաղորդութիւն:

ե. Եմոսնութիւն:

զ. Կարգ կամ Չեռնագրութիւն:

է. Օծումն հիւանդաց:

Ն. Յայդ խորհրդոց քանիքն անկրկնելի են:

Պ. Երեքն, որք են՝ Սկրտութիւն, Դրոշմ,
Կարգ:

Ն. Սկրտութիւնն բառի նշանակութիւնն
ի՞նչ է:

Պ. Լռացոմն:

Ն. Որով օրինակաւ կատարի Սկրտու
թիւնն:

Պ. Երեք անգամ ՚ի ջուրն ընկղմելով զերե
խայն յանուն ամենասուրբ Երրորդու
թեան, շօր և Որդւոյ և շօղոյն Սրբոյ:

Ն. Ինչի՞նչ նշանակ երեք անգամ ընկղմումն:

Պ. Քրիստոսի երեքօրեայ թաղման:

Ն. Ի՞նչ օգուտ ունի այդ խորհուրդը:

Պ. Մերէ զերեխայն յայն մեղաց՝ որոյ մէջ
ծնուած է նա, այսինքն՝ ՚ի Սկզբնական
մեղաց:

Ն. Դրոշմ զի՞նչ նշանակէ:

Պ. Նշան կամ Վնիտ:

Ն. Որպէս կատարէ քահանայն զայդ խոր
հուրդը:

Պ. Օծանելով մեռնող զՍկրտուածի ճա
կատը, ևս և զզգայարանքը, այսինքն՝
զաչքը, զակնջքը, զհոտակլիքը, ևն:

Ն. Դրոշմի օգուտն ի՞նչ է:

Պ. Չօրացուցանէ զընդունողը զՔրիստո
նէական հաւատը պահելու, և Քրիս
տոսի անուանակից առնէ:

Ն. Եպաշխարութիւնն բառն զի՞նչ նշանակէ:

Պ. Եպա աշխարոմն, այսինքն՝ յեա մեղան
չելոյն լալ՝ ցաւիլ՝ սգալ ՚ի վերայ գոր
ծեալ մեղաց:

Ն. Երբ կատարեալ համարի Ապաշխարու-
թիւնն:

Պ. Երբ որ կատարուի Օգջմամբ սրտի,
Խոստովանութեամբ, և վճարմամբ Ա-
պաշխարանաց:

Ն. Ինչով վճարի Ապաշխարանքն:

Պ. Աղօթիւք, Պահօք, և Ողորմութեամբ:



Ն. Հաղորդո՞ւի՞նք բառի նշանակուածութիւնն
ի՞նչ է:

Պ. Կորցրո՞ւի՞նք կամ Մասնակցո՞ւի՞նք:

Ն. Ի՞նչ պատճառաւ այդպէս կոչի:

Պ. Այն պատճառաւ՝ որ եթէ արժանապէս
ճաշակէ քրիստոնեայն զՔրիստոսի մար-
մինը և արիւնը՝ ընդ տեսակաւ հացի և
զինւոյ, հաղորդի՝ այսինքն՝ միանայ ընդ
նմա հոգւով:



Ն. Ան-ան-ձեան Խորհուրդն որն է:

Պ. Պսակն է, որով հարսն ու փեսայն ան-
բաժանելի կապակցին և կենակից լինին
միմեանց՝ յօրինակ անբաժան միաւորու-
թեան Քրիստոսի ընդ սուրբ Եկեղեցւոյ:

Ն. Կարգն ի՞նչ է:

Պ. Ի՛հ հոգևոր և սուրբ պաշտօն Աստուա-
ծային, որ Չեռնաբրո՞ւի՞նք ևս կոչի:

Ն. Ի՞նչ պատճառաւ կոչի Չեռնաբրո՞-
ւի՞նք:

Պ. Այն պատճառաւ՝ որ եպիսկոպոսն զձեռ-
քը ընծայուածի զլինին զնելով և աղօ-
թելով՝ տայ նմա հոգևոր իշխանութիւն,
և կարգէ զնա ՚ի պաշտօն Եկեղեցւոյ:

Ն. Քանի՞ աստիճան ունի Կարգն:

Պ. Եօթն, որք են՝

ա. Դռնապանութիւն:

բ. Դպրութիւն:

գ. Երգմեցուցչութիւն:

դ. Չահրակալութիւն:

ե. Ախասարկաւազութիւն:

զ. Սարկաւազութիւն:

է. Քահանայութիւն:

Ն. Եպիսկոպոսութիւնն ի՞նչ է:

Պ. Ի՛յ զլնաւոր քահանայութիւն. ուստի
կոչի և Քահանայապետո՞ւի՞նք:

Ն. Աթոզիկոսութիւնն ի՞նչ է:

Պ. Ի՛յ զլնաւոր եպիսկոպոսութիւն՝ հան-

ղերձ ընդհանրական և ծայրագոյն իշխանութեամբ ՚ի վերայ ողջոյն ազգի: ուստի կոչի և Եպիսկոպոսսպետութիւն:

-
- Ճ. Հիւանդաց Օծումն որն է:
- Պ. Ե՛յն օծումն է՝ որ հիւանդաց համար սահմանեալ է:
- Ճ. Ինչո՞վ կատարի:
- Պ. Աղօթիւք, և օծմամբ օրհնեալ իւղոյ:
- Ճ. Եռանց օծման իւղոյ չէ՞ կարելի զայդ խորհուրդդ կատարել:
- Պ. Կարելի է, որպէս կատարէ չայոց Եկեղեցին՝ միայն քահանայից աղօթիւք:

Ը. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵՆԱՅ

- Ճ. „Յարութիւն մեռելոց“ ասելով՝ զի՞նչ պարտ է իմանալ:
- Պ. Պարտ է իմանալ՝ թէ մեռեալ մարդոց մարմինքն ՚ի վերջին դատաստանի օրն՝ իւրեանց հոգւոց հետ միաւորուելով՝ պիտի յառնեն (այսինքն՝ կենդանանան) Եստուծոյ հրամանաւ:

Թ. ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

- Ճ. Չվերջին դատաստանը նվ պիտի աւուէ:
- Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս:
- Ճ. Ի՞նչպէս:
- Պ. Յետ բաժանելոյ զարդարքը ՚ի մեղաւորաց, ամենայն մարդոց վարձ կամ պատիժ պիտի տայ՝ ըստ իւրեանց գործոց:
- Ճ. Ո՛ւր պիտի լինին արդարքն, և ո՞ւր մեղաւորքն:
- Պ. Արդարքն պիտի լինին յերկնից արքայօւթեան, և մեղաւորքն ՚ի դժոխս:
- Ճ. Արքայութիւնն ի՞նչ է:
- Պ. Եյնպիսի երանաւէտ վիճակ կամ կեանք մի է, զոր ոչ աչք է տեսած, ոչ ականջ է լսած, և ոչ լեզու կարէ պատմել:
- Ճ. Դժոխքն ի՞նչ է:
- Պ. Եյնպիսի չարաչար վիճակ մի է, որ լի է ամենատեսակ տանջանօք և թշուառութեամբք:

ԳԼ: Բ

ՅՈՅՍ

- Ն. Օրինչ ինչ պարտիմք յուսալ յԱստուծոյ:
- Պ. Պարտիմք յուսալ վայելելոյ վայն ամենայն բարիքը՝ զորս խոստացեալ է Աստուծ իւր սիրելեացն:
- Ն. Որպիսի բարիք խոստացեալ է:
- Պ. Խոստացեալ է կեանք, հանգիստ, և երանութիւն անվախճան:

ԳԼ: Գ

ՅԶԻ

- Ն. Աստուծոյ սերն զինչ պահանջէ 'ի մարդոյ:
- Պ. Պահանջէ զնորա օրէնքը կամ պատուիրանքը պահել:
- Ն. Օրինչ հրամայեն Աստուծային Օրէնքն:

- Պ. Ի չար գործոց հեռանալ, և գործել զբարի:
- Ն. Օրէնքն քանի՞ տեսակ է:
- Պ. Երկու տեսակ է, Բնական և Դրական:

- Ն. Բնական Օրէնքն ո՞րն է:
- Պ. Մարդոյ խցմտանքն է, որ 'ի բնէ՝ այսինքն 'ի ծննդնէ՝ տպաւորեալ է ամենայն մարդոց սրտի մէջ:
- Ն. Այլ ի՞նչ Օրէնքներ ծնան 'ի Բնական Օրինաց:
- Պ. Ամենայն Քաղաքական և Դատաստանական Օրէնքներ, որք հաստատեցան և հաստատին յօրինաւոր Թագաւորաց և յԱշխանաց:
- Ն. Պարտական եմք հնազանդիլ և այնպիսի Օրինաց:
- Պ. Այո՛, պարտիմք հնազանդիլ իբրև Աստուծոյ հրամանի, որպէս զրուս՝ են զըլխաւոր Առաքեալքն Պետրոս և Պաւղոս*:

* Հնազանդ լըրուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ. եթէ Թագաւորի՛ իբրև առաւել ումեք, եթէ

- ⲁ. Գրական Օրէնքն որն է:
- Պ. Այն է՝ որ յետ Բնական օրինաց զրուեցաւ, և բաժանի ՚ի շին և ՚ի Նոր:
- ⲁ. շին Օրէնքն որն է:
- Պ. Այն է՝ զոր Աստուած Մովսէս մարգարէի ձեռամբ տուաւ:
- ⲁ. Ո՞ր տեղ և երբ:
- Պ. Ի Սինա լեռին, յիններորդ օրումք՝ յետ երանելոյ Խարայէլացոց յԵղիպտոսէ:
- ⲁ. Քանի՞ տեսակ էր շին Օրէնքն:
- Պ. Երեք տեսակ էր, այսինքն՝ Բարոյական, Ծիսական, և Գատաստանական:
- ⲁ. Քրիստոս հաստատեց վերստին զայդ Օրէնքները:
- Պ. շատատեց միայն զԲարոյական Օրէնքը՝ ուստի և ամենայն քրիստոնեայք պարտական են պահելու զայն:

գատաւորաց՝ իբրև ՚ի նմանէ առաքելոց՝ (ս Գեոր. Թ. 13. 14):
 »Որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ՝ (Հւոմ. ԺԳ. 2):

- ⲁ. Ո՞րք են Բարոյական Օրէնքն:
- Պ. Աստուծոյ տասն Պատուիրանքն են, որք զրուած էին յերկու քարեղէն տախտակաց վերայ:
- ⲁ. Ասո՞ղատան Պատուիրանքը:
- Պ. Թ. »Մի եղելին քեզ այլ աստուածք՝ բաց յինէն:
- բ. Մի արասցես կուռս:
- գ. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ՚ի վերայ սնտակաց:
- դ. Յիշեան սրբել զոր Աբաթու:
- ե. Պատուես զհայր քո և զմայր:
- զ. Մի սպանաներ:
- է. Մի շնար:
- ը. Մի գողանար:
- թ. Մի սուտ վկայեր:
- ժ. Մի ցանկանար տան ընկերի քո, և էն:

- ⲁ. Օ՞րնչ հրամայէ Աստուած »Մի եղելին քեզ այլ աստուածք՝ բաց յինէն՝ ասելով:
- Պ. Հրամայէ՝ որ բաց ՚ի միոյն Աստուծոյ՝ այլ Աստուած չճանաչեմք:

Հ. „Մի արացես կուռս“ ասելով՝ զԲՆԷ
հրամայէ Մատուած:

Պ. Հրամայէ՛ որ կուռք (այսինքն՝ ՚ի քա-
րէ՛ ՚ի փայտէ կամ յայլ նիւթոց շե-
նուած պատկեր) չպաշտենք:

—

Հ. „Մի առնուցուս զանուն Մատուծոյ
քո ՚ի վերայ սնտանաց“ ասելով՝ զԲՆԷ
հրամայէ:

Պ. Հրամայէ՛ ոչինչ բաների համար Մա-
տուծոյ անուամբ չերգուիլ:

—

Հ. Շաբաթի ո՞ր լիզուի բառ է, և զԲՆԷ
նշանակէ:

Պ. Նբրայեցւոց լիզուի բառ է, և նշանակէ
Հանգիստ:

Հ. Որն է քրիստոնէից Հանգստեան օրն:

Պ. Աիւրակէն, որ աշխարհի ստեղծման ա-
ռաջին օրն է, վասն որոյ կոչի նաև
Միաշաբաթի:

Հ. Ո՞՞ք սահմանեցին՝ Շաբաթի տեղ ըզ-
Աիւրակէն պահել:

Պ. Մուքեայքն սահմանեցին զկնի Քրիս-
տոսի համարձման:

Հ. Ինչո՞ւ համար:

Պ. Այնոր համար՝ որ յայն օրուիք յա-
րեալ Քրիստոս, և յայն օրուիք իջաւ
Հոգին Սուրբ Մուքեայց վերայ ՚ի վեր-
նատան:

Հ. Հայոց բառ է Աիւրակէ:

Պ. Ո՞չ այլ Յունաց բառ է. Հայերէն
Թարգմանի Տէրո-նական:

Հ. Ի՞նչպէս պարտ է սուրբ պահել զԱիւ-
րակէն:

Պ. Ի ծառայական գործոց ազատ մնալով,
և հոգեշահ գործոց պարապելով:

Հ. Ծառայական գործքն ի՞նչ են:

Պ. Այն աշխատութիւնքն են՝ որք մարմնա-
ւոր շահուց համար լինին:

Հ. Հոգեշահ գործքն ի՞նչ են:

Պ. Այսոքիկ են. յեկեղեցի՝ զնալ, աղօթել,
քարոզ լսել ՚ի քահանայից կամ Մա-
ռաջնորդաց, Աւետարան կամ այլ հո-
գևոր գրեանք կարդալ, և այլն:

—

Ն. „Պատուեն զհայր քո և զմայր“ ասե-
լով զԼ՛նչ հրամայէ Աստուած:

Պ. Հրամայէ՛ պատուել սիրով և հնազան-
դութեամբ ոչ միայն զմեր մարմնաւոր
ծնողքը, այլ և զհոգւոր ծնողքը, որք
են՝ հոգւոր Հովիւք, Սարժապետք, և
այլ երախտագործ անձինք:



Ն. Աստուած զԼ՛նչ հրամայէ “Մի՛ սպա-
նաներ, Մի՛ շնար, Մի՛ գողանար, Մի՛
սուտ վկայեր” ասելով:

Պ. Հրամայէ՛ որ պատճառ չլինիմք մեր
կամօք՝ ոչ մեր և ոչ այլոց մահուան.
չնութիւն և գողութիւն չառնեմք, և
սուտ բանի վկայ չլինիմք:



Ն. „Մի՛ ցանկանար տան ընկերի քո“ աս-
ելով զԼ՛նչ հրամայէ Աստուած:

Պ. Հրամայէ՛ որ մեր ընկերաց ստացուածքը
չյափշտակեմք:



Ն. ‘Նոր Օրէնքն ո՞րն է:

Պ. Ի Քրիստոսէ աւանդեալ՝ և յԱռաքե-
լոց քարոզեալ և գրեալ բանքն են:

Ն. Օր՛նչ ինչ հրամայեն ‘Նոր Օրէնքն:

Պ. Հրամայեն՝ յ՛ր և իցէ մեղաց կամ ՚ի
մոլութեանց զգուշանալ, և առաքինու-
թիւն գործել:

Ն. Մեղքն քանի՞ տեսակ է:

Պ. Երկու. Սկզբնական, և Ներգործական:

Ն. Ո՞րն է Սկզբնական մեղքն:

Պ. Ազամային մեղքն է, որ է անհնազան-
դութիւն պատուիրանացն Աստուծոյ:

Ն. ‘Ներգործականն ո՞րն է:

Պ. Այն է՝ զոր մեք մեզէն գործեմք յեա
մկրտութեան:

Ն. Ի քանի՞ն բաժանի:

Պ. Յերկուս, այսինքն՝ ՚ի Մահուչափ, և
՚ի Ներելի:

Ն. Ո՞յք են Մահուչափքն, և ո՞յք Ներելիքն:

Պ. Մահուչափ կոչին ծանր ծանր մեղքերն,
և Ներելի՛ փոքր և թեթեւ մեղքերն:

Ն. Գլխաւոր մոլութիւնքն քանի՞ են:

Պ. Եօթն. Հպարտութիւն, Նախանձ,

Բարկութիւն, Ծուլութիւն, Ագա-
հութիւն, Որկրամուլութիւն, Բղջախո-
հութիւն:

Հ. Ոչք են՝ այդ մուլութեանց հակառակ՝ ա-
ռաքինութիւնքն:

Պ. Այսոքիկ. Խոնարհութիւն, Աղբայրսի-
րութիւն, Հեզութիւն, Արիութիւն,
Ողորմածութիւն, Բարեխառնութիւն,
Ողջախոհութիւն:

Հ. Խնչով կարելի է մեզ ազատ փնալ ՚ի
մեղաց կամ ՚ի մուլութեանց:

Պ. Մեր յօժարակամ ջանիւք, և Աստու-
ծոյ շնորհօքն՝ զոր պարտիմք աղօթիւք
խնդրել:



Հ. Քանի՞ կերպ է Աղօթքն:

Պ. Արկու. Հրապարակական, և Առանձ-
նական:

Հ. Որն է Հրապարակականն:

Պ. Այն է՝ որ եկեղեցւոյ մէջ լինի կարգա-
ւորեալ ժամասացութեամբ:

Հ. Առանձնականն որն է:

Պ. Այն է՝ զոր մէք առանձին կատարեմք:

ուղղափառ հաւատով՝ և բարի գործով՝ և
սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութիւն
գալ առ քեզ. և ողորմ:

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն
արասցես զես՝ քաղցրութիւն աւանդել զհոգի
իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն
այսոցն՝ որք են ՚ի ներքոյ երկնից. և ողորմ:

Լոյս ճշմարիտ՝ Քրիստոս, արժանաւո-
րեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել ըզ-
լոյս փառաց քոց ՚ի կոչման աւուրն, և հանգ-
չել յուսով բարեաց յօթեանս արդարոց
մինչև յօր մեծի գալստեան քոյ. և ողորմ:

Ղատաւոր արդար, յորժամ դաս փառօք
Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի
մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում,
այլ փրկեա՛ զես ՚ի յաւիտենական հրոյն, և
լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց
յերկնից արքայութիւնդ. և ողորմ:

Ամենողորմ Տէր, ողորմեա՛ ամենայն հա-
ւատացելոց ՚ի քեզ, իմոց և օտարաց, ծանօ-
թից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց.
շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատկեաց զթո-
ղութիւն՝ որ առ իս յանցանաց, և դարձն

զնոսա 'ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի
ողորմութե քու՛մ արժանի եղեցին. և ողորմ:

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծա-
ռայիս քո, և կատարեա՛ 'ի բարի զննորուածս
իմ՝ բարեխօսութք սրբուհւոյ Աստուածած-
նին՝ և Յովհաննու Մկրտչին, և սրբոյն
Ստեփաննոսի Առաքիլային, և սրբոյն Գրի-
գորի մերոյ Առաքելին, և սրբոց Առաքե-
լոց, Մարգարէից, Արդապետաց, Մարտի-
րոսաց, Հայրապետաց, Ճգնաւորաց, Առ-
սանաց, Միանձանց, և ամենայն սրբոց քոց՝
երկնաւորաց և երկրաւորաց: Եւ քեզ փառք
և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Եր-
րորդութեդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ա Ե Ր Զ



10

